



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE

Թի 1037
Օգոստոս 7, 1992

Բարեջնորհ
Նորայր Արև. Օտապաշեան
Հոգևոր մատակարար Ա. Գրիգոր Նարեկացի Եկեղեցույ
Գլխվրձնու.

Միրելի Նորայր Սարկաւագ,

Ստացած ենք Յուլիս 25, 1992 թուակիր նամակդ, որով քու եւ համայնքին անունով
շնորհակալութիւն կը յայտնեն մեր հովուական այցելութեան համար:

Մենք անձնապէս ուրախ ենք որ կարելի եղաւ Գլխվրձնուի Ա. Գրիգոր Նարեկացի
Եկեղեցույ հոգևոր մատակարարի պաշտօնը վստահիլ քեզի: Մենք վստահ ենք որ այս
պաշտօնը լրջութեամբ եւ բժախնդրութեամբ պիտի կատարես եւ ձեռք պիտի բերես հովուական
փորձառութիւն մը, որ մեծապէս օգտակար պիտի ըլլայ քեզի քու ընդգրկելիք ասպարեզիդ մէջ:

Կը սպասենք որ պարբերաբար գրես մեզի քու աշխատանքներուդ մասին, եւ մեզի հետ
կապ պահես համայնքային որեւէ հարցի կամ ստեղծուած դժուարութեան բարոք լուծման
համար:

Կ'աղօթենք որ Տէրը առաջնորդ հանդիսանայ քու եկեղեցանուէր աշխատանքներուդ մէջ եւ
Իր շնորհները անպակաս ընէ քու վրայէդ:

Միրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ



Յուլիս 25, 1992

Բարձրաշնորհ՝
Տ. Խաժակ Մ. Եպ. Պարսամբան
Առաջնորդ Ամերիկահայոց Արևելեան Թեմի
Նիւ Եորք

Միրելի Սրբազան Հայր .

Այս գրուածամբ յանուն Քլիվլընտի Մ. Գրիգոր Նարեկացի Հայց. Եկեղեցւոյ բարեպաշտ ժողովուրդին կը յայտնեմ խորին շնորհակալու-
թիւններ Ձեր առաջին հովուական այցելութեան համար :

Համայնքին համար բացառիկ եւ հաճելի առիթ մըն էր վայելելու
Ձեր ներկայութիւնը, ներշնչուելով Ձեր մատուցած Մ. Պատարագէն եւ
յուսակից պատգամներէն :

Դա եւ կ'ուզեմ անձնապէս երախտագիտութիւնս յայտնել որ զիս ար-
ժանի գտաք պաշտօնավարելու այստեղ որպէս հոգեւոր մատակարար : Ես
վստահ եմ որ մօտ ատենէն առիթ կ'ունենամ փորձարութիւններուս մասին
խօսակցելու Ձեզի հետ միշտ օգտուելով Ձեր հայրական խորտներէն :

Կը մտաչիմ ի համբոյր Ձերդ Սրբազնութեան աչոյն :

Յարգանքով՝
Կորնալիս Արք. Ալեքանյան
Նորայր Արկ. Օտապաշեան

ST. GREGORY OF NAREK ARMENIAN CHURCH
678 Richmond Road
Richmond Heights, Ohio 44143
(216) 381-6590